


ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԻ ՏԱՃԱՐԱԿԱՆԱՑ ԱՆԿԱՆ ԿԱՐԳ (ԶԷԶՈՔ)
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՊՈԼՍՈՅ ՀԱԿԱԼԻՔՈՒԱԿԱՆ «ՅՈՅՍ» ԹԻՒ 4 ՕԹԵԱԿԻՆ

Թ Ի Ի 2

ԿՈԶ ՀԱՅՈՒԹԵԱՆ



ՊԱՅՔԱՐԻՆՔ ԱԼՔՈՒԻՆ ԴԵՄ



ԳԻՆ 20 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

1914

613
7-19

20 JUL 2010

6/3
7-19 u.g.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԻ ՏԱՃԱՐԱԿԱՆԱՑ ԱՆԿԱԽ ԿԱՐԳ (ԶԷՋՈՔ)
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՊՈԼՏՈՑ ՀԱԿԱԼՔՈՒԱԿԱՆ «ՅՈՅՍ» ԹԻՒ 4 ՕԹԵԱԿԻՆ


Թ Ի Ի 2



ԿՈՉ ՀԱՅՈՒԹԵԱՆ



ՊԱՅՔԱՐԻՆՔ ԱԼՔՈԼԻՆ ԴԵՍ



Կ. ՊՈԼՒՍ
1914

17 JUL 2013

2729

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐՋՈՒԾԱՆ
№ 221



3216
39

ՊԱՅԲԱՐԻՆԲ ԱԼՔՈՒՆ ԴԷՄ



«Թէ մտրղը հնարած է խնորեալ եւ թորեալ ըմպելիները, ափեա իր հանճարի ուժը կը ցուցնէ, բայց անոնց վնասները ճանչնալով հանդիմ. չկարենալ անոնց տիրապետութիւնը թօթափել, իր նկարագրին ամբողջ տիրութիւնը կը նշանակէ» :

Ժ. ՆԷՕՆԱՌԻԶ

ԱԼՔՈՒՆ ԱՆՁՍԵՆԵՐԸ մի առ մի թուելու ջանալ այս գրքոյկին անձուկ տողերուն մէջ անկարելի պիտի ըլլար անտարակոյս, այնչափ շատ ու բազմատեսակ են անոնք, ուստի եւ անոնցմէ գլխաւորները միայն իրենց էական գիծերուն մէջ մեր սիրելի ընթերցողներուն նկատառման կը յանձնենք խնդրելով որ ուշի ուշով կարդան :

Ալբրի վնասները երեքի կարելի է դասակարգել, ֆիզիքական, բարոյական, ընկերային: Մենք պիտի առնենք միայն ֆիզիքականը :

ԱԼՔՈՒՆ ԵՒ ՍՏԱՐԱՐՈՒՄ. — Ալբրոյին առաջին հրպուսը բերնին, լեզուին եւ կոկորդին հետ ցաւազին է, որովհետեւ ալբրը այրող համ մը ունի, ուրկէ՛ խանդը պէտք է կանխազգար արդէն

թէ իր այդ գործածելիք նիւթը վտանդաւոր է : Արդարեւ համին զգացողութիւնը տեսակ մը դոնապանի դեր ունի դէպ ի ստամոքս ուղղութիւք նիւթերուն ինքնութիւնը քննելու պաշտօնով :

Ստամոքսին մէջ . ալքոլը կը շարունակէ իր գրգռիչ ազդեցութիւնը : Ներքին պատերը կ'արիւնալեցուին . արիւնը առատօրէն հոն կը խուժէ : Մարսողութիւնը դիւրացնելու ծառայող հիւթը (suc gastrique) կը կորսնցնէ իր բնական յատկութիւնները որով եւ իրմէ սպասուած ծառայութիւնը չի կրնար մատուցանել : Եթէ այս բորբոքումը յարատեւ առնուած ալքոլի նորանոր քանակութիւններով , ներքին թաղանթը քրոնիկ բորբոքումի մը կեդրոնը կը դառնայ որ հետզհետէ զայն կ'աւրէ եւ անոր գործունէութիւնը անկարելի կը դարձնէ :

Մարսողութիւնը կը սկսի դանդաղ , դժուար , ցաւազին ըլլալ : Քացղածութիւններ կ'իմանայ մարդ , փսխումներ կը պատահին մանաւանդ առաւօտները : Ինչ որ ամէնէն վտանգաւորն է այս պարագային , հիւանդը իբր թէ մարսողութիւնը դիւրացնելու համար օրէ օր քիչ մը աւելի ալքոլ կը գործածէ , եւ կամ աւելի ուժով ալքոլ , այսինքն աւելի թունաւոր : Այդ միջոցին ալքոլամուր ստամոքսի բորբոքում մը ունի (gastrite) :

Երբեմն այդ բորբոքումը խորապէս կը խոցուի ստամոքսը : Այս ալ gastrite ulcérente կոչուած հիւանդութիւնն է , գրեթէ անբուժելի , որ հիւանդը կը մեռցնէ արիւնի փսխումներու ընկերացած անտանելի ցաւերու մէջ :

ԱԼԲՈՒԸ ՆՈՒ ԼԵԱՐԻԸ. — Լեարդը կարմիր խոշոր գեղձ մըն է որուն պաշտօնը շատ կարեւոր է : Լեարդն է որ մաղձը կը զատէ :

Արիւնը իր մէջ պարփակուած ալքոլը լեարդին կը բերէ , եւ այսպէս այդ գործարանին գործելու ազատութիւնը կը խանգարուի : Կ'արիւնակոյտուի , կը բորբոքի , մերթ ժաւալը կը մեծնայ եւ կը իւղոտի , եւ կամ ընդհակառակը կը կծկուի , կը կարծրանայ , կը տծեւնայ եւ կը գնդիկաւորնայ :

«Ինչ որ շատ կարեւոր է դիտելը , կ'ըսէ Տօքթ. Շօփար , այս վիճակին հասնող գինեմու մը , շատ լաւ կը տանի ալքոլը . ամէնէն գէշ ալքոլամուր այն է որ երբէք չի գինովնար , այն որ ամէն օր քիչ քիչ կը թունաւորէ ինքզինքը :»

ՉԿԱՅ ԱԼԲՈՒԱՄՈՒ ՄԸ ՈՐ ԱՌՈՂՋ ԼԵԱՐԻ ՄԸ ՈՒՆՆԱՅ :»

ԱԼԲՈՒԸ ՆՈՒ ԵՐԻԿԱՄՈՒՆԻԸ. — Երիկամուները՝ զոր կարելի է բաղդատել մաղի եւ կամ գոյն գործիքի մը , արիւնը կը մաքրէ . բայց ալքոլի ազդեցու-

Թեան տակ կը բորբոքի եւ կ'արիւնակոյտուէր ճիշտ լեարդին պէս, յետոյ կը իւզոտի կամ կը ծիւրի, կը բաշուի, պարագային համեմատ:

ԱԼԻՄՈՒԸ ՍԻ ԱՐԵՍԱՆ ԵՐՋԱՆԸ. — Հինգ կամ վեց լիթրա արիւնը՝ որ սրտէն մղուելով, կը հոսի մեր շնչերակներուն եւ երակներուն մէջ, հեղուկ միան կարելի է կոչել որ սահմանուած է մեր մարմնոյն բոլոր մասերը սնուցանելու: Արդ, ապացուցուած է որ ալբոլը շատ շուտով արիւնին մեջ կ'անցնի, եւ անոր կազմութիւնը կը խանգարէ: Ալբոլացած արիւնը հակամէտ է թանձրանալու, այսինքն արեան թանձրացած կտորներ կազմելու: Արեան այս կտորները կրնան արեան պզտիկ խողովակները գոցել, եւ արեան շրջանին կանոնաւորութեան արգելք հանդիսանալ: Կը պատահի նաեւ որ շնչերակներուն մէջ խոռոչներ կը գոյանան որոնց բարակցած երեսները կրնան պատռիլ, ճիշդ պզտիկ տղայոց ունեցած տեսակ մը սուլիչին պէս որ փչուելով կարմիր ներկուած քառչուէ մասը կ'ուռի եւ վերջապէս եկած օդին ճընշումին չի կրնալով դիմադրել կը պայթի: Ալբոլամոլներու շնչերակները, ինչպէս ծերերունը, կը կարծրանան, ծխափողի մը պէս: **ԱԼԻՄՈՒՄՈՒԹԻՒՆԸ ՈՐ ԾԵՐԵՐՈՒ ԵՆՋԵՐԱԿՆԵՐԸ ԿՈՒՏԱՅ ՄԵՉՐ, ՎԱՂԱՉԱՍ ԾԵՐՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է:** Յաճախ պզտիկ երակ մը կը խզուի ուղեղին

մէջ, ինչ որ ուղեղային կաթուած յառաջ կը բերէ. եւ կամ արիւնի կարծրացած կտոր մը չի կրնար շրջան ընել շատ պզտիկ երակի մը մէջ, այն ատեն այդ երակին՝ գործողութեան շրջանակը եղող ուղեղի մասը ամբողջ անգործութեան կը դատապարտուի: Այս ալ ուղեղային կազմաշուծումն է: Կարողութիւնները կը տկարանան եւ անդամալուծութիւնը չուշանար: Ալբոլամոլները ընդհանրապէս կարմիր դէմք մը ունին եւ մորթին տակ շատ որոշակի կ'երեւին արեան պզտիկ երակները: Քիթը մանաւանդ շատ յատկանշական է, իր գոյնովը եւ իր ծեւափոխութեամբը, որ զայն գետնախնձորի մը եւ կամ լոլիկի մը նմանցընել կը մղէ զմեզ: Մորթին տակ արիւնի այս առատութիւնը դիւրաւ կը բացատրուի: Մեր մարմնոյն մէջ գտնուող ջիղերէն մէկ մասին պաշտօնն է արգելել արեան խողովակներուն չափազանց ընդլայնումը: Արդ, ալբոլը կը ջլատէ այդ ջիղերը եւ խողովակները բացուելով արիւնով կը լեցուին:

Աիրտը՝ արեան շրջանի կեդրոնական գործարանը, արիւնը մղելու համար պարտաւոր է ուժգին շարժումներ ընելու, բայց ալբոլը զայն կը իւզոտէ, անոր իւրաքանչիւր հիւսկէնը՝ ճարպի խառով մը պատելով եւ արգելք կ'ըլլայ կծկումներուն: Սիրտին կարողութիւնը

ուրեմն պակասձ է ճիշդ այն պահուն երբ ամէնէն աւելի պիտի պիտի ունենար իր ամբողջ ուժին՝ կարենալ յաղթելու համար արեան շրջանի վերը յիշուած անկանոնութիւններուն : Ասոր հետեւանքով յաճախ ալքոլամոլներուն սիրտը կը գոցուի եւ շունջը կը բռնուի :

Ա.Լ.ԲՈՒԸ ԵՒ ԹՈՒՎԵՐԸ. — Կը բաւէ խմանի մը շունջը հոտուրտալ հասկնալու համար որ առնուած ալքոլին մէկ մասը դուրս կ'ելնէ թոքերէն , որոնք կ'արիւնակոյտուին , հազի նոպաներ կ'ունենայ ենթական եւ սիրտը կը գոցուի : Չայնը խուպոտ է : Պոսոլիչը , կուրծքի արեան համախոնուամը յաճախակի կը դառնան :

Բայց մանաւանդ , ալքոլամոլութիւնը թոքերը տրանալիս կ'ընէ թոքախտի , անոնց դիմադրութեան ուժը տկարացնելով որով անկարող կը դառնան այդ սոսկալի հիւանդութեան միքրոպին դէմ կըռուելու : Այժոյր մասակարարն է թոքախտին որ ամենամեծ աւերները կը գործէ աշխարհիս ամէն կողմը :

Ա.Լ.ԲՈՒԸ ԵՒ ԶՂԱՅԻՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ. — Ալքոլի ազդեցութիւնը ուղեղին վրայ ամէնուս կողմանէ դիտուած է :

Քիչ մը խմած անձ մը «գուարք» է կըսուի : Ինքնայատուկ գաղափարներ ունի , եւ արդէն դժուարաւ կրնայ զանոնք ամբողջել : Գինովու-

թեան մը սկզբնաւորութիւնն է այդ : Ուղեղային կազմածը կը սկսի արդէն խանգարուիլ :

Յաջորդող գաւաթներուն անձը «անպոսած» է , իր ֆանթեզիները նուազ շահեկան եւ զուարեայի են : Միշտ միեւնոյն գաղափարին շուրջ կը դառնայ եւ կը սկսի ծանծրացուցիչ ըլլալ :

Յետոյ գինովաթիւնը կը յաջորդէ , որ ատեն ուղեղը «քաղաքը տուած» , կամ բնաւ եւ կամ շատ գէշ կը կառավարէ անձը : Գաղափարները արտառոց կ'ըլլան , եւ շարժումները անկանոն , ծախաւեր : Մարդը այլ եւս ողջամիտ չէ : Ժամանակաւոր խեղճ մը եղած է , որովհետեւ գինովութիւնը ճշմարիտ խենթութիւն մըն է :

Քիչ քանակութեամբ առնուած , սակայն ՅԱՃԱԽ ԿՐԿՆՈՒՄԾ ալքոլը շատ յոռի ազդեցութիւն մը կ'ունենայ ուղեղին եւ ջիղերուն վրայ : Ջղային նիւթը կ'աւրէ : Անոր ազդեցութեան տակ , ջիղերու այն հիւանալի ցանցը որ մեր մարմնոյն մէջ կը հրատալէ եւ կը զգայ , փոթորիկէ մը վերջ հեռագրի թելերու կրած աւերումներուն պէս՝ բոլորովին յեղաշրջուած ըլլալ կը թուի :

Այսպէս , ճետողութիւնը կը տկարանայ , ալիանջը խժումներ կ'ունենայ , բերնի հաւը բոլորովին խաթարուած է , անդամներուն ծայրերը շատ քիչ զգայուն են եւ կամ երբեմն չափազանց զգայուն , անդամները դողդղալ սկսած են , ինչ որ

շատ վնասակար է ամէն արհեստներու համար ալ, մանաւանդ այն աշխատութիւններուն որոնք մանրակրկիտ նրբութիւն կը պահանջեն, ինչպէս՝ ոսկերչութիւն, ժամագործութիւն, մեքենագործութիւն եւն. եւն. : Որքան գործաւորներ ըստիպուած են լաւ գործ մը ձեռքէ հանել եւ ընդունիլ բազմաչարչար եւ գէշ վնարուած աշխատութիւններ :

Վերջապէս, ինացականութիւնը կը պակսի, միտք կը մարի եւ կը տխմարանայ :

ԱՆՔՈՒ ՆՈՒ ԽՆԵՆՔՈՒԹՈՒՆՆԵՐ. — Եթէ զինուորացիներ կարճ խնկութիւն մըն է, ալքոլի երկարատեւ գործածութիւնը մարդս տրամադիր կ'ընէ երկարատեւ խնկութեան : Նախ մելամաղձոտութեամբ մը կը սկսի, սարսափելի տրամադրութիւններ կ'ունենայ, յետոյ կուգայ անքնութիւնը, քունը շատ քիչ է, ընդմիջուած զարթնումներով, բնաւին հանգստացնող, երազներով ու զգայախաբուութիւններով լեցուն :

Երբեմն, ալքոլամոլը «տէլիբիում թրէմէնս» է ըստուած է, այսինքն մարմնոյ շոգոզացումի ընկերացած խնկութիւն մը : Այս վիճակին մէջ անուելի զգայախաբուութեանց ենթարկուած է : Ինքզինքը շրջապատուած կը զգայ նողկալի կենդանիներէ, մուկ, դոճոշ, մամուկ : Ինքզինքը կը պաշտպանէ երեւակայական յարձակումներու

դէմ : Դէմքի արտայայտութիւնը անձկալից է : Չկայ աւելի սարսափելի տեսարան քան այս ցաւազին անցքերը :

«Տէլիբիում»ի հարուածին ենթարկուած խրմողներէն դուրս, մտային հիւանդութեանց ապաստանարանները լեցուն են հիւանդներով որոնց խնկութիւնը ալքոլի արդիւնք է : Եւ կամ մեծութեանց խնկութիւն է, ալքոլամոլը ինքզինքը թագաւոր, կայսր կամ Աստուած կը կարծէ, կամ կը կարծէ որ զինքը կը հաղածեն, իր ամէն լսածը եւ տեսածը իր դէմ ուղղուած է, եւ կամ ռարդասպանութեան մտաւեռոտելու ունի եւ կ'ուզէ մէկը սպաննել :

Յաճախ այս հիւանդները ապաստանարանի մը մէջ մասնաւոր ուէժիմի մը հետեւելով (ուրկէ ալքոլը դուրս ձգուած է, աւելորդ է ըսել) բաւական արագօրէն կ'ապաքինին, բայց իրենց կամքի ուժը պակասած է ալքոլին ազդեցութեամբը : Առաջին փորձութեան իսկ չեն դիմանար, իրենց մահաբեր սովորութեան մէջ կ'իյնան կրկին եւ վերստին ապաստանարան դիմելու հարկին մէջ կը գտնուին :

Նմանօրինակ պարագաներ տեսնուած են ուր ենթական տասնեակ մը անգամ ապաստանարան վերադարձած է :

ԱՆՔՈՒԸ ԵՒ ԺԱՌԱՆԳՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ . — Մեր ծնողքը մեզ կը փոխանցեն իրենց ուժը , առողջութիւնը , յատկութիւնները , ինչպէս նաեւ հակամիտութիւններ . իրենց ունեցած հիւանդութիւններն ու պակասութիւններն ունենալու :

Ալքոլամոլին ջղային դրութիւնը խանգարուած եւ տկարացած է , իր տղաքը պիտի ժողովեմք ուրեմն այս խանգարումը եւ տկարութիւնը : Գիտականօրէն հաստատուած իրողութիւն մըն է այս :

Ալքոլամոլներու տղաքը հիւանդկախ եւ տրխնդ կ'ըլլան , զունատ , կծկուած մորթով , փոքր ծերերու երեւոյթը ունին եւ դիւրաւ կ'ենթարկուին ամէն հիւանդութեանց : Այս դժբաղդներուն մահացութեան քանակը սոսկալի է :

Իրենց մտային կարողութիւնը խիստ սահմանափակ է , յարատեւ ուշադրութեան կեդրոնացման կարող չեն , եւ ինչ որ ցաւալի է , ոգեւից ըմպելիներ գործածելու չափազանց հակամեծ են :

Այն տեղերը ուր ալքոլամոլութիւնը կը տիրէ , բնակչութիւնը կը վտտի եւ հասակը կը կարճնայ :

ԱՆՔՈՒԸ հիւանդութեանց հանդէպ մարդուս ունեցած դիմադրական ուժը կը պակսեցնէ . ասիկա հազարաւոր փորձերով ապացուցուած է , նա մա-

նաւանդ համաճարակներու ատեն : Դիտուած է որ քոլերայէ վարակոողներուն հարիւրին ութսուներ ոգելից ըմպելի գործածողներ են . վարակեալ տասը ալքոլամոլէն հազիւ երկու հոգի , իսկ ժուժկայներէն տասնէն եօթը կը բուժուին :

*
*
*

Ալքոլին պատճառած այս վնասներուն չեն ենթարկուիր միայն անոնք որ կը զինովնան , ինչպէս կը կարծեն շատերը , այլ եւ հաւասարապէս անոնք՝ որոնք չտոլորութիւն ըրած են կանոնաւորաբար ամէն օր որոշ եւ չափաւոր քանակութեամբ ոգելից ըմպելի գործածելու : Տարբերութիւնը կը կայանայ հոն որ առաջինները կարճ ժամանակի մը մէջ կը փճանան , իսկ վերջինները ընդհակառակն տարիներու շրջանին , առանց սակայն կասկածելու որ իրենց տկարացման պատճառը ոգելից ըմպելին եղած ըլլայ , քանի որ ոչ իսկ մէկ անգամ զինովցած են : Ալքոլամոլութեան այս ձեւն է արդէն որ աւելի մեծ թուով անգիտակից գոհեր կը խլէ մարդկութենէն անդադար :



Ալքոլին բարոյական եւ ընկերային վնասներուն վրայ ծանրանալ յառաջիկային վերապա-

հելով, չենք կրնար հոս, մեզ համակիր հանրութեան ուշադրութիւնը չհրաւիրել հետզհետէ ծաւալող այս մոլութեան վրայ:

Օրէ օր անող գարեջրատուններու, գինատուններու պարերու եւն. թիւը պէտք եղածէն աւելի պերճախօս է մեր ըսածը ապացուցանելու: Ատոնք պէտքի մը առջեւ է որ իրենց դռները կը բանան, այսինքն խնդրամբ մը կայ եւ իրենք կը փութան մատուցում մը ընել:

Մենք կը հրաւիրենք ողջախոհ հասարակութիւնը որ իտէալ մը ունի, մեզ միացնելու իրենց ջանքերը,— չէ՞ մի որ միութիւնը զօրութիւն է, որպէս զի կարենանք իրագործել մեր ծրագիրը որ միայն ալքովէն հեռու պահել չէ՛ մեր երիտասարդութիւնը, այլ առաջնորդել դէպի լաւագոյն կեանք մը առողջ, երջանիկ եւ պատուաւոր: Չի բաւեր միայն ըսելը. «հեռու կեցիր զինտունէն, դադրէ՛ ինքզինքդ թունաւորելէ շարունակ զանազան գրաւիչ պիտակներու տակ դըրուած ու կեանքդ սպառող այս նիւթը կուլ տալով:» Պէտք է ատոր հետ միասին կարենալ ըսել նաեւ իրեն. «հեռու կեցի՛ր, եկո՛ւր մեզի հետ, եկո՛ւր բնութեան անհամար բարիքները վայելելու փոխանակ գոց, նեխած, անշնչելի մըթնոլորտի մը մէջ մեղմօրէն ընդարմանալու ալքովի շոգիին մէջ: Եկո՛ւր մեզ հետ կեանքիդ շրջա-

նը երկարել, մասնակցելով զանազան հրահանգիչ եւ օգտակար Ֆիզիքական փորձերու, փոխանակ կարգ մը հաճոյքի ընկերներու հետ սպառուիչ խօսակցութեանց անվերջանալի շարքերու մէջ մոռնալու ամէն ինչ. եկո՛ւր մեզ հետ, վայելելու ճշմարիտ եղբայրութեան բարիքները անուշ գոհունակութիւնը օգտակար ըլլալու իր անձին, իր նմաններուն, եկո՛ւր, եկո՛ւր . . . :»

Կրնանք ըսել իրենց այդ բանը, եւ սակայն որքան աւելի խանդավառութեամբ եւ աւելի վստահութեամբ պիտի կատարէինք մեր ստանձնած գործը երբ մեր շուրջ զգայինք աւելի համակրութիւն եւ քիչ մը աւելի գործակցութիւններ . . . :

Մեր ընկերակցութեան անդամակցի փոփառոյնները կրնան դիմել մեզ՝ զբրոյկիս կողքին վրայ նշանակուած հասցեով:



« Ազգային գրադարան



NL0273042

ՅՈՅՍ

ԱՄՍՍԹԵՐԹ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ,
Հ Ա Կ Ա Լ Գ Ո Լ Ա Կ Ա Ն

Իր սեսակին մեջ միակը ամբողջ Հայութեան մեջ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս եւ Գաւառները. դարձ. արժ. 12.

Արտասահման, 3 ֆրանք 11/2 ըուպիի, 3/4 տոլար

Ա Լ Բ Ո Լ Ի Զ Ա Ր Յ Ը

Գ. Ի. Ն. Լ. Գ. Ա. Ն. Ա. Բ. Թ. Թ.

32 էջոց նոյն բովանդակութեամբ օգտակար գրքոյկ մը, որմէ սակաւարթիս օրինակներ միայն մնացած են :

Սոյն հրատարակութեանց համար դիմել՝

ՏՕՐԹ. Կ. Ս. ՀՐԵԴՆԻՆԸ.

Բերս, Անգլոֆոնոյցի Թիւ 454, Կ. Պոլիս

در سعادت بك اوغلنده حادۀ كبريه ١٩٠٤ نومرولى خانه ده

دوقتر هينتليان

Dr. V. M. HINTLIAN

154, Grand Rue de Péra

CONSTANTINOPLE